ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐՍԵՂՅԱՆ Ս. Մ.

Ժամանակակից աշխարհում գլոբալացման և տեղայնացման հետ կապված փոփոխվող իրավիճակը պետահիրավական և սոցիալական հիմնահարցերը հետազոտողների առջև նորանոր խնդիրներ է դնում, որոնք վերաբերում են ինչպես բուն իրավական պետությանը և քաղաքացիական հասարակությանը, այնպես էլ դրանց փոխգործակցության և փոխկապվածության բնույթին:

Ներկայումս հայրենական և արտասահմանյան գրականության մեջ իրավական պետության և քաղաքացիական հասարակության վերաբերյալ ստեղծվել են ամենատարբեր տեսություններ, որոնք հավակնում են վերին ճշմարտությունը լինելուն: Մի շարք հեղինակներ (ԱՄՆ), որպես կանոն, դիտարկելով քաղաքացիական հասարակության և իրավական պետության խնդիրները, այդ կազմավորումները նույնացնում են ավանդական բուրժուական հասարակության և ամենասովորական կապիտալիստական պետության հետ[1]: Խոսքը «քաղաքացիական հասարակության վերակառուցման» և դրա հետ հարաբերակցող պետության «կատարելագործման» մասին է[2]:

Ի տարբերություն արևմտյան հետազոտողների՝ ռուս փիլիսոփաների և իրավագետների մեծամասնությունը, ժողովրդավարական դիրքերից դիտարկելով հետխորհրդային պետությունը և հասարակությունը, ոչ անհիմն կերպով, ելակետ են ընդունում այն հանգամանքը, որ քաղաքացիական հասարակությունը և իրավական պետությունը դեռևս լիակատար կայացած իրողություններ չեն: Նրանցից ոմանք այդպիսի հասարակության և պետության կառուցման հիմքում դնում են տեղական շահերը և ազգային արժեքները: Որոշ հետազոտողներ հիմնվում են, մեղմ ասած, խիստ արտասովոր այն դրույթի վրա, որ հետխորհրդային հասարակություններում «հոգևոր-բարոյական ժառանգությունը լուրջ խոչընդոտ է դառնում դեպի ազատ տնտեսություն, շուկայական հարաբերություններ, ժողովրդավարական ինստիտուտների ընկալմանը տանող ճանապարհին»[3]:

Սակայն, չնայած իրավական պետության և քաղաքացիական հասարակության վերաբերյալ պատկերացումների ձևավորման հարցում գոյություն ունեցող տարբեր մոտեցումներին՝ դրանք բոլորն էլ (ինչպես և դրանց նախորդած շատ տեսություններ և դոկտրիններ, մասնավորապես, «համընդհանուր բարեկեցության պետությունը», «սոցիալական պետությունը», «համաժողովրդական պետությունը» և այլն) չափից ավելի իդեա-

---

[1] **Polangy K.** *Great Transformation, Boston, 1967;* **Ackerman B.** *Social Justice in Liberal State, N. Y. 1980,* **Sandel M.** *(ed) Liberalism and its Critics, N. Y. 1984;* **Offer C.** *Contradiction of Walfare State, Cambridge, 1994.*

[2] **Коэн Дж., Арато Э.** *Гражданское общество и политическая теория, М., 2003, с. 544-636.*

[3] **Вестов Ф.А., Фаст О. Ф.** *Правовое государство, М., 2016, с. 21-22.*

լականացնում են պետահիրավական և սոցիալական իրողությունները, հաճախ ցանկալին ներկայացնում որպես իրականություն:

Դիտարկելով իրավական պետության և քաղաքացիական հասարակության տեսությունները՝ իրականության արտացոլման համարժեքության տեսանկյունից, չի կարելի չնշել, որ դրանք վերաբերում են ոչ թե իսկապես պետական և հասարակական կազմավորմանը, այլ ենթադրելի և իդեալականացված ապագային: Աշխարհում երբևէ չեն եղել և չկան իդեալական «իրավական պետություն» և «քաղաքացիական հասարակություն», հաշվի առնելով այն խիստ բարձր պահանջները, որոնք դրանց գաղափարախոսների և հետևորդների կողմից ներկայացվում են այդ կազմավորումներին: Սակայն քաղաքակրթության զարգացման յուրաքանչյուր փուլում գոյություն է ունեցել պետահիրավական և սոցիալական հերթական մի իդեալ, որը «երկրային դրախտի ուտոպիա է», և «այն կարող է լինել ոչ միայն առաջընթացի անվերապահ նպատակ, այլև գործնական իրականություն»[4]: Այդուամենայնիվ, ներկա պահին իդեալական իրավական պետության և քաղաքացիական հասարակության բացակայությունը նշանակում է արդյոք, որ դրանք պետության և իրավունքի տեսաբանների, սոցիոլոգների կամ փիլիսոփաների համար չեն կարող և չպետք է լինեն հետազոտության հերթական օբյեկտ: Ակնհայտ է, որ՝ ոչ: Չէ՞ որ գիտության խնդիրը, ինչպես արդարացիորեն նշում է մի հեղինակ, ոչ միայն այն է, որ «նկարագրի, համակարգի և բացատրի գոյություն ունեցողը, այլ նաև նայի դեպի ապագան, կանխատեսի հեռանկարային զարգացման հնարավոր տարբերակները»[5]:

Բնականաբար, իրավական պետության տեսության, ինչպես և հենց իրավական պետության դիտարկման գործընթացում, անկախ դրա իրական կամ հնարավոր լինելուց, առաջին հերթին կիրառվում են իմացության ավանդական միջոցներ և մեթոդներ, որոնք ուղղված են կենսականորեն այն կարևոր պայմանների նախադրյալներն ու գործոններն ի հայտ բերելուն, որոնք կնպաստեին որոնելի երևույթների երևան գալուն և զարգացմանը:

Մասնագիտական գրականության մեջ ստեղծված իմացության գործընթացի տեսության և պրակտիկայի մասին պատկերացումների համաձայն՝ բոլոր նախադրյալները և գործոնները, որոնք ազդեցություն են թողել և թողնում են իրավական պետության գաղափարների զարգացման ու ձևավորման վրա, կարելի է դասակարգել ամենատարբեր չափանիշներով: Դրանցից ամենակարևորը և ամենատարածվածներից է «կամային չափանիշը», ըստ որի՝ բոլոր նախադրյալները և գործոնները բաժանվում են օբյեկտիվի (որոնք կախված չեն մարդու կամքից ու գիտակցությունից) և

---

[4] *Տե՛ս* Марченко М.Н. *Правовое гасударство и гражданское общество, М., 2015, с. 9-10:*

[5] Керимов Д.А. *Проблемы общей теории права и государства, Тюмень, 2005, с. 521.*

սուբյեկտիվի (որոնք ստեղծվել են մարդու կողմից կամ նրա որոշակի ազդեցությանն են ենթարկվել)[6]:

Նշենք, որ օբյեկտիվ և սուբյեկտիվ նախադրյալների և գործոնների դասակարգումը բավական անորոշ է և պայմանական: Այդ անորոշության և պայմանականության հիմնական պատճառն այն է, որ յուրաքանչյուր գաղափար և տեսություն, անկախ նրանից, թե ինչպիսի օբյեկտիվ նախադրյալների և գործոնների ազդեցության ներքո է առաջանում և զարգանում, միշտ անցնում է սուբյեկտների, մարդկանց կամքի և գիտակցության միջով: Այս տեսանկյունից տվյալ գործոնները և նախադրյալները ավելի ճիշտ կլիներ անվանել ոչ թե օբյեկտիվ, այլ օբյեկտիվ-սուբյեկտիվ: Դա մի կողմից: Իսկ մյուս կողմից՝ իրավական պետության գաղափարների ձևավորման և զարգացման գործընթացի վրա օբյեկտիվ ազդեցություն թողած տնտեսական, սոցիալ-քաղաքական և այլ միջավայրի ոչ մի բաղադրիչ չի կարող գոյություն ունենալ և գործել հասարակության և նրա առանձին անդամների՝ սուբյեկտների կողմից դրա վրա ունեցած ազդեցությունից դուրս: Այս տեսանկյունից հասարակության ստեղծած նախադրյալները և գործոնները ավելի ճիշտ կլիներ անվանել ոչ թե սուբյեկտիվ, այլ սուբյեկտիվ-օբյեկտիվ իրողություններ:

Նկատի ունենալով այդ վերապահումը՝ անդրադառնանք հիմնականում օբյեկտիվ (օբյեկտիվ-սուբյեկտիվ) նախադրյալներին և գործոններին, որոնք ի սկզբանե ազդեցություն են թողել իրավական պետության գաղափարների առաջացման և զարգացման գործընթացի վրա:

Ընդհանուր փիլիսոփայական և սոցիոլոգիական առումով դրանք գրեթե չեն տարբերվում այն պայմաններից, նախադրյալներից և գործոններից, որոնք մարդկային քաղաքակրթության զարգացման տարբեր փուլերում նպաստել են բոլոր առաջադեմ տեսությունների և առանձին գաղափարների ի հայտ գալուն և էվոլյուցիային: Դրանք սոցիալական պայմաններ, նախադրյալներ և գործոններ են, որոնք առաջանում են հասարակության, տնտեսության, քաղաքականության, տեխնոլոգիաների և մարդկության ընդհանուր մշակույթի զարգացման շնորհիվ և ծառայում են որպես ամենատարբեր տնտեսական, քաղաքական, սոցիոլոգիական և այլ տեսությունների ու գաղափարների կատալիզատոր:

Ավելի կոնկրետ ասած՝ իրավական պետության գաղափարների ի հայտ գալը և զարգացումը պայմանավորած օբյեկտիվ նախադրյալները և գործոնները արմատավորվում են իրավական, ավելի ճիշտ, հասարակության պետաիրավական մշակույթի մեջ և դրանով իսկ հասարակության և նրա գաղափարախոսների կողմից ձևավորվող իրավագիտակցության շնորհիվ դրսևորվում են վարքագծերի, գաղափարների ձևով:

Հատկապես սոցիալ-քաղաքական միջավայրում են ձևավորվում ոչ միայն բուն իրավական պետությանը, այլ նաև պետաիրավական ինստիտուտները, հաստատությունները և դրանց վերաբերող իրավական գաղա-

---

[6] **Овчинников А.И.** *Правовое мышление: теоретико-методологический анализ (отв. ред. П. П. Баранов, Р. н/д, 2003, с. 10-15).*

փարախոսությունը: Իրավագիտակցությունը, որպես պետության տեսության և միջավայրի միջև մի յուրատեսակ միջանկյալ, «միջնորդավորող» օղակ, նաև պետահիրավական գաղափարների, հայացքների ու պատկերացումների աղբյուր է:

Իրավագիտակցությունը, ինչպես նշել է իրավագետ Ի. Իլյինը, «ավելի լայն ու խորը մի բան է, քան «գիտակցությունը» և դրա մեջ կարևորվում են ոչ միայն գիտելիքն ու մտածողությունը, այլև երևակայությունը, կամքը, զգացմունքը և ամբողջ մարդկային հոգին»[7]:

Մարդը ստեղծում է պետությունը, ընդգծում է հեղինակը, «հենց գիտակցությամբ, զգացմունքով և կամքով, ոչ ուղղակի արտաքին արարքներով, այլ նաև այն շարժառիթներով, որոնք նրան ստիպում են գործել այդպես, ոչ թե այլ կերպ, ոչ միայն իրավական նորմերով կամ հարկադրանքի ուժով, այլև հոգու և ոգու տևական, հաստատուն և բովանդակային գերագույն լարմամբ»: Իսկ պետական մտածելակերպը, պետական ուղղվածությունը, յուրաքանչյուր գործող պետության անհրաժեշտ և իրական հիմքն են: «Դա նման է այն օդին, որի միջոցով այն շնչում է, առանց որի խեղդվում և մահանում է»[8]:

Դա վերաբերում է յուրաքանչյուր պետությանը՝ որպես «հոգևոր առումով համերաշխ մարդկանց կազմակերպված մի միավորում, որոնք մտքով հասկանում են իրենց հոգևոր համերաշխությունը, ընդունում հայրենասիրական սիրով և կամքով աջակցում դրա ինքնահաստատմանը»[9]: Ներառելով պետահիրավական գաղափարները, հայացքները և պատկերացումները՝ իրավագիտակցությունը համընդհանուր ազդեցություն է գործում ոչ միայն առանձին գաղափարների ձևավորման և զարգացման, այլ նաև հասարակության զարգացման ավելի ուշ փուլերի վրա:

Իրավագիտակցությունը՝ որպես իրավական պետության գաղափարների առաջացման նախադրյալ և գործոն, ունի հետևյալ բնութագրական հատկանիշները.

1. Իրավագիտակցությունը, ինչպես և դրանից ծնված գաղափարները չեն մնում անփոփոխ, այլ հասարակության զարգացմանը զուգընթաց՝ մշտապես զարգանում և կատարելագործվում են: Իրավագիտակցության էվոլյուցիայի հետ մեկտեղ զարգանում և կատարելագործվում են նաև հասարակության պետահիրավական կազմակերպման մասին գաղափարներն ընդհանրապես և իրավական պետության մասին գաղափարները՝ մասնավորապես:

2. Իրավագիտակցությունը, հանդես գալով որպես իրավական կամ որևէ այլ պետության և իրավունքի գաղափարների առաջացման համընդհանուր նախադրյալ և դրանց հետևողական զարգացման ու կատարելագործման գործոն, նպաստում է առաջադիմական գաղափարների, հա-

---

[7] **Ильин И.А.** *Теория права и государства (под ред. и предисл. В. А. Томсинова, М., 2003, с. 230-231).*

[8] *Նույն տեղում, էջ 260:*

[9] *Նույն տեղում, էջ 261:*

յացքների և մտքերի ձևավորմանն ու զարգացմանը: Հասարակության զարգացման տարբեր փուլերում իրավական պետության հայեցակարգը, որպես ձևավորված և համակարգված գիտական ուսմունք, նպաստել և նպաստում է տարբեր երկրներում (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում) գործնականում կառուցելու իրավական պետության մոդելը:

ПРАВОВОЕ ГОСУДАРСТВО И ПРАВОСОЗНАНИЕ

БАРСЕГЯН С. М.

Резюме

Изменение ситуации в современном мире, вызванное глобализацией, перед исследователями правовой сферы выдвигает вопросы, имеющие отношение как к теории правового государства и гражданского общества, так и к характеру их взаимодействия и взаимообусловленности.

На разных этапах развития общества концепция правового государства в качестве сформировавшейся научной дисциплины способствовала и по сей день способствует конструированию модели правового государства в разных странах, в том числе и в Республике Армения.

LEGAL STATE AND LEGAL AWARENESS

S. BARSEGHYAN

Abstract

The change in the situation in the modern world, caused by globalization, raises questions before the researcher in the legal sphere, concerning the theory of the rule of law and civil society, as well as the nature of their interaction and interdependence.

At various stages of the development of society, the concept of the rule of law as a formed scientific discipline has contributed to and to this day contributes to the construction of a model of the rule of law in different countries, including the Republic of Armenia.